



«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱԿՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ
ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Քրիստոնյա Արևելքի մշակույթի և
մատենագրական ժառանգության հիմնական կենտրոնները և
գործիքները

Առարկան՝ ՀԵՊ

Հետազոտող ուսուցիչ՝ Լ. Առաքելյան

Ուսումնական հաստատություն՝ ☐ Արագածավանի թիվ 2 մ/դ ☐
ՊՈԱԿ

Երևան 2022

Բովանդակություն

Ներածություն.....	2
Քրիստոնյա Արևելքի մշակույթը.....	3
Մատենագրական ժառանգության հիմնական կենտրոնները	6
Մատենագրական ժառանգության հիմնական գործիքները.....	8
Եզրակացություն.....	11
Օգտագործված գրականություն.....	12

Ներածություն

Յուրաքանչյուր ազգի լեզուն ու մատենագրությունը հարուստ է ինքնին: Տարբերվելով միմյանցից՝ նրանց մեջ նույնական է մի բան, բոլորն էլ իրենց զարգացման հիմքում դրել են քրիստոնեական մատենագրության գոհարը՝ Աստվածաշունչը: Քրիստոնյա երկրների գրականություններն ու մշակույթները տարբերվում են իրարից: Նրանցից ոչ բոլոր ժողովուրդներն են, որ ստեղծել են ազգային լեզվով մատենագրություն: Արևելքի քրիստոնյա ժողովուրդները քրիստոնյա են դարձել հունական ինչպես նաև ասորական կամ արամեական մշակույթի ճանապարհով:

Արևելյան քրիստոնյա եկեղեցիները Քաղկեդոնի եկեղեցական ժողովից հետո բաժանվեցին բյուզանդական եկեղեցուց և ընտրեցին պատմական զարգացման ինքնուրույն ճանապարհ կարելի է ընդգծել, որ Նիկիայի ժողովում արդեն բաժանվել էին Արիոսի հետևորդները, իսկ Եփեսոսում՝ Նեստորի: Նրանց մի մասը կարողացավ պաշտպանել սեփական ազգային դեմքը, իսկ մյուսները՝ ասորիներն ու ղպտիները, ժամանակի ընթացքում պատմական հանգամանքների բերումով կորցրին ազգային լեզուն և ծուլվեցին արաբների հետ: Եփեսոսի ժողովից հետո, Նեստորի հետևորդները Սասանյան Պարսկաստանում ստեղծեցին առանձին եկեղեցական կազմակերպություն, որն անվանվում է նաև Արևելյան ասորի եկեղեցի, որը Դ դարի ընթացքում ճանաչվեց Տիգրանի տիրակալների կողմից:

Քրիստոնյա Արևելքի մշակույթը

Յուրաքանչյուր ազգի լեզուն ու մատենագրությունը հարուստ է ինքնին: Տարբերվելով միմյանցից՝ նրանց մեջ նույնական է մի բան, բոլորն էլ իրենց զարգացման հիմքում դրել են քրիստոնեական մատենագրության գոհարը՝ Աստվածաշունչը: Քրիստոնյա երկրների գրականություններն ու մշակույթները տարբերվում են իրարից: Նրանցից ոչ բոլոր ժողովուրդներն են, որ ստեղծել են ազգային լեզվով մատենագրություն: Արևելքի քրիստոնյա ժողովուրդները քրիստոնյա են դարձել հունական ինչպես նաև ասորական կամ արամեական մշակույթի ճանապարհով:

Արևելյան քրիստոնյա եկեղեցիները Քաղկեդոնի եկեղեցական ժողովից հետո բաժանվեցին բյուզանդական եկեղեցուց և ընտրեցին պատմական զարգացման ինքնուրույն ճանապարհ կարելի է ընդգծել, որ Նիկիայի ժողովում արդեն բաժանվել էին Արիոսի հետևորդները, իսկ Եփեսոսում՝ Նեստորի: Նրանց մի մասը կարողացավ պաշտպանել սեփական ազգային դեմքը, իսկ մյուսները՝ ասորիներն ու ղպտիները, ժամանակի ընթացքում պատմական հանգամանքների բերումով կորցրին ազգային լեզուն և ծուլվեցին արաբների հետ: Եփեսոսի ժողովից հետո, Նեստորի հետևորդները Սասանյան Պարսկաստանում ստեղծեցին առանձին եկեղեցական կազմակերպություն, որն անվանվում է նաև Արևելյան ասորի եկեղեցի, որը Դ դարի ընթացքում ճանաչվեց Տիգրանի տիրակալների կողմից:

Ասորական բնակչության շրջանում ստեղծվեցին մի քանի եկեղեցիներ և միատարր բնակչությունը բաժանվեց մի քանի համայնքների՝ նեստորականներ /Արևելյան եկեղեցի/, հակոբիկներ արևմտյան եկեղեցի, մարիոնիներ սրանք է դարից հետո բյուզանդական եկեղեցուց հեռացած «միականականներն են», որոնք ԺԲ դարում ճանաչեցին Հռոմի գերագահությունը, մելկիտներ սրանք բյուզանդական եկեղեցու հետևորդներն էին, որոնց մի նշանակալի մասը ԺԴ դարից հետո միացավ Հռոմի պապական եկեղեցուն: Գրեթե նույն ձևատառերն ունեցավ նաև ղպտական եկեղեցին, որը Քաղկեդոնի ժողովից հետո իր հիմնական մասով, արևմտյան ասորիների հետ առանձնացավ Տիգրատական եկեղեցուց, կենտրոն ունենալով Աղեքսանդրիա քաղաքը: Սակայն ԺԲ դ. հետո ղպտի եկեղեցու մի խումբ ներկայացուցիչներ միացան կաթոլիկներին: Հիշատակված բոլոր եկեղեցիների շարքում ամենահզորը պետք է օգտագործել «հակաքաղկեդոնական» եզրույթը եկեղեցին էր արևելքում: Հակաքաղկեդոնական դավանաբանության հետևորդ է նաև Հայոց եկեղեցին:

Քրիստոնեությունն ասորախոս (արամեախոս) աշխարհում տարածվել է առաքելական ժամանակներից, իսկ ասորական եկեղեցին, խոսքը կարող է վերաբերել միայն Արևելյան և Արևմտյան ասորական եկեղեցիներին, սկիզբ է առել վաղ քրիստոնեական համայնքից: Անտիոքի պատրիարքական աթոռի հիմնադիրը համարվում է Պողոս առաքյալը: Անտիոքից և Եդեսիայից քրիստոնեությունը տարածվել է դեպի Արևելք: Ասորի քրիստոնյաները քարոզել են Եդեսիայում, Հյուսիսային Ասորիք, Ադիաբենեում Հյուսիսային Միջագետք: Ասորախոս քրիստոնյա բնակչությունը հաստատված էր Հռոմեական կայսրության և Պարսկաստանի սահմանային գոտում՝ Հյուսիսային Ասորիք և Հյուսիսային Միջագետք: 363 թվականին, երբ պարսիկները գրավել են Մծբինը, քրիստոնյա ասորիները Եփրեմ Ասորու գլխավորությամբ տեղափոխվել են Եդեսիա: Մծբինը և Եդեսիան իրենց նշանավոր դպրոցներով եղել են ասորական քրիստոնեության հոգևոր կենտրոններ: Այդ դպրոցները Սասանյան Պարսկաստանում նույն դերն ունեին, ինչ Անտիոքի դպրոցը Բյուզանդիայի համար:

Միջին դարերում ասորական, նկատի ունեք Արևելյան թե՞ Արևմտյան ասորական եկեղեցին, գիտական միտքը մեծ վերածնունդ է ապրել, համայնքներն ունեցել են աստվածաբանության, փիլիսոփայության, պատմության և այլ գիտությունների բարգավաճող կենտրոններ: Ջարգացման իր բարձրակետին 13-րդ դ. Ասորի ուղղափառ եկեղեցին ներառել է քսան մետրոպոլիտական աթոռներ և հարյուր երեք թեմ, որոնք հասել են մինչև Աֆղանստան: Հիշատակված երկու ասորական եկեղեցիներից ո՞րը նկատի ունեք այդ ժամանակաշրջանում Կենտրոնական Ասիայում գոյություն են ունեցել նաև առանց եպիսկոպոսի առաջնորդվող ասորական ուղղափառ հավատացյալների համայնքներ: Այստեղ խոսքը վերաբերում է ավելի շատ Արևելյան ասորի եկեղեցուն :Սակայն 14-րդ դարի վերջին Լենկթեմուրի արշավանքների ընթացքում ասորական եկեղեցիների և վանքերի մեծամասնությունը ավերվել է, փակվել են կրթության շատ կենտրոններ՝ սկիզբ դնելով երկարատև անկման: Արևելյան ասորական եկեղեցու մատենագրական զարթոնքի դարաշրջաններ կարելի է համարել Ը-ԺԳ դդ., իսկ Արևմտյանինը՝ Դ – Է դդ. և ԺԴ-ԺԷ դդ.

Ներկայումս մի քանի վանքեր են պահպանվել հարավարևելյան Թուրքիայում, Իրաքում, Լիբանանում, Սիրիայում: Մեկ վանք բացվել է Նիդեռլանդներում, որն իր տեսակի մեջ միակն է ասորական սփյուռքում: Վանքերը ներկայումս կրթական կենտրոններ են, որտեղ ստանում են աստվածաբանական կրթություն: Թե Արևելյան և Թե Արևմտյան ասորական եկեղեցու կենտրոններ են Ի դարում ստեղծվել Ամերիկայում և Եվրոպայում: Պիտի շեշտվեր, որ արևմտյան ասորիների/հակոբիկների հոգևոր կենտրոնը այսօր գտնվում է Դամասկոսում, իսկ արևելյանինը՝ Բաղդադում/:

Ասորի ուղղափառ եկեղեցու գլխավոր աստվածաբանական հարստությունը Ս. Երեմ սիրիական ուղղափառ ձեմարանն է: Հիմնվել է 1939-ին Մոսուլում (Իրաք), ապա 1960-ական թվականներին փոխադրվել է Լիբանան: 1968-ին ձեմարանը տեղափոխվել է Բեյրութի մոտ գտնվող Ատչանեի վայրը, սակայն Լիբանանում բռնկված քաղաքացիական պատերազմի հետևանքով ուսանողները հաստատվել են Դամասկոսում: 1995թ-ին Ս. Եփրեմ ձեմարանի նոր մասնաճյուղեր են բացվել Դամասկոսին մոտ գտնվող Սայեդնիայում:

Հայոց պատմության վաղ շրջանի բազմաթիվ անցքեր ու ավանդություններ արտացոլվել են ասորի մատենագիրների երկերում, որոնցից օգտվել են հայ մատենագիրները: Մեսրոպ Մաշտոցին, հայկական գրերը ստեղծելիս աջակցել են ասորի գիտնականները: Աստվածաշնչի հայերեն առաջին թարգմանությունները կատարվել են նաև ասորերենից: Ասորերեն են թարգմանվել հայ մատենագիրների երկերը:

Ասորական եկեղեցու հայրերից մի քանիսը՝ Հակոբ Մծբնացի, Եփրեմ Ասորին իրենց գործունեությամբ և մատենագրական վաստակով առնչվել են հայ իրականության հետ, դասվել են Հայ եկեղեցու տոնելի սրբերի կարգը:

Արևելաքրիստոնյա ժողովուրդների լեզուները պատկանում են տարբեր լեզվաընտանիքների կամ նույն ընտանիքի տարբեր խմբերի: Արևելաքրիստոնեական եկեղեցիներից յուրաքանչյուրը օգտագործելով իր սեփական լեզուն եկեղեցական ծեսում, ընդգծում էր իր ազգային պատկանելությունը, հակադրվելով բյուզանդական ներթափանցմանը, Սասանյան Պարսկաստանի տիրապետությանը և իսլամից եկող վտանգին: Թվարկված յուրաքանչյուր եկեղեցու պատրիարք կամ կաթողիկոս ոչ միայն հոգևոր հովիվ էր, այլ նաև պաշտպանը և խորհրդանիշը ազգային ինքնությունության:

Չնայած եկեղեցական, ազգային, քաղաքական և ծիսական տարբերություններին, քրիստոնյա արևելքը ներկայացնում է մի իրական միասնություն, որը գալիս էր քրիստոնեության հիմքը կազմող բնագրեից, որի ավանդույթը հաճախ սերում էր հունականից, հիմնականում դառնալով առաջին դրսևորումը ազգային լեզվով մատենագրության: Հետաքրքրական է նաև այն պարագան, որ որոշ հայրաբանական երկեր միջնորդավորված են մուտք գործել հիշված եկեղեցական մատենագրություններ: Ասորական, Եթովպիական և ղպտական գրականության համար նման միջնորդի դեր թ դարից հետո/-րդ դարից հետո կատարել է արաբերենը:

Քրիստոնյա արաբական գրականությունը առանձնահատուկ է նրանով, որ սկսած թ դարից դրանով են սկսում գրել ղպտի և ասորի եկեղեցական գործիչները, իսկ 12-րդ դարից այն գրեթե միակ մատենագրական լեզուն է, որից օգտվում են այդ

ժողովուրդները: Հետաքրքիր է նաև այն պարագան, որ այդ լեզվով են իրենց երկերը շարադրում նաև Եգիպտոսում, Ասորիքում և Պաղեստինում բնակվող բազմաթիվ կաթոլիկ հայ եկեղեցականներ:

Մատենագրական ժառանգության հիմնական կենտրոնները

Հայ միջնադարյան մատենագրությունը սկսվելով 5-րդ դարից, քանի որ մեր կարծիքով այդ գրականությունը բուռն թափով զարգանում է մինչև 18-րդ դար, երբ Մխիթար Սեբաստացին և նրա հետևորդները սկիզբ դրեցին հայոց պատմության և մատենագրության գիտական ուսումնասիրությանը: Հայ մատենագրության խոշոր ներկայացուցիչներ էին՝ Մովսես Խորենացին, Ագաթանգեղոսը, Եղիշեն, Փավստոս Բյուզանդը, Պողոս Տարոնացին, Հովհաննես Սարկավազը, Գրիգոր Ակնե ցին, Գավիթ Քոբայրեցին, Կոստանդին Երզնկացին, Մխիթար Սկռնացին, Եսայի Նչեցին, Գրիգոր Տաթևացին և ուրիշներ, որոնք ուրույն ազդեցություն են ունեցել հայ մատենագրության զարգացման վրա:

Եգիպտոսում սկսած մ. թ. Բ դարից մինչև Քաղկեդոնի ժողովը Աղեքսանդրիայի սուրբ հայրերը գրում էին հիմնականում հունարեն: Այս եկեղեցու ծիսակատարությունները մինչև այդ կատարվում էին հունարեն, իսկ դրանից հետո՝ ղպտիերեն, այդ պատճառով էլ մինչև Քաղկեդոնի ժողովը ստեղծված երկերի համար դժվար է պնդել, թե ո՞ր լեզվով են դրանք գրվել: Ուշագրավ է, որ ղպտիական գրականության ծաղկումը տեղի է ունենում մինչև 12-րդ դարը, իսկ դրանից հետո նկատելի է, որ այդ լեզվին գալիս է փոխարինելու արաբերենը:

Մինչև 10-րդ դարը ոչինչ հայտնի չէ եթովպական գրականությունից, վաղ շրջանից հայտնի են միայն Աստվածաշունչը և մի շարք ծիսական գրքեր:

Եթովպական բոլոր աստվածաշնչային գրքերը և պարականոնները մինչև 10-րդ - դարը թարգմանվել են հունարենից: Սակայն ԺԳ-ԺԴ դարից սկսվում է այս

գրականության հիմնական վերածնունդը, այս դարաշրջանում քրիստոնեական մատենագրությունը եթովպերեն էր թարգմանվում հիմնականում արաբերենից:

Դ -Ձ դարերում Հայոց և Վրաց եկեղեց-նվիրապետական կապը և դավանական միասնությունը ծնել ու սնել են գրի ուղարկության (Կորյունի վկայությամբ՝ Մեսրոպ Մաշտոցն ու նրա օգնական վրաց Ջաղան են վրաց գրերի հեղինակները), մատենագրության, ծեսերի, տոների, ճարտարապետական պաշտանմունքային ընդհանրություններ: Հայերենից և հայերենի միջնորդությամբ են վրաց մշակույթին փոխանցվել մատենագրական ոչ քիչ թվով արժեքներ կան նաև բազմաթիվ երկեր, որոնք վրացերենից են թարգմանվել հայերեն, որոնք գոյությունն իրեն զգալ է տվել հայ-վրացական եկեղեցական բաժանումից հետ երկար ժամանակ: Այսրկովկասի եկեղեցական միասնությունը խախտվել է Է դարի սկզբին:

Վրաց եկեղեցական մատենագրության սկիզբ է համարվում Ս. Շուշանիկի վկայաբանությունը՝ Ե դարի հեղինակ Հակոբ Տուրտավցու երկը, որը, հավանաբար, ստեղծվել է 475 թ.: Շուշանիկը սերում էր նշանավոր հայկական ազնվական ընտանիքից: Նրա հայրը՝ զորավար Վարդան Մամիկոնյանը, պարսիկների դեմ 451 թ. ապստամբության հերոսն էր: Պարզ է, թե ինչպիսի էական նշանակություն է ունեցել այս բնագիրը հայ-վրացական եկեղեցական փոխհարաբերություններում:

Թ դարից սկսած նշանավոր վանական-գրչության կենտրոններ են հաստատվել Վրաց եկեղեցուն հարած Տայքի ու Կղարջքի վերազարթոնք ապրող վանքերում: Հիշատակված տարածաշրջանը քաղկեդոնական հայերի մշակութային կենտրոններից է Այդ վանական միությունները եղել են գիտության ու մշակույթի կենտրոններ, հաղորդակցվել Արևմուտքի և Արևելքի քրիստոնեական եկեղեցիներում ընթացող գրական մշակութային աշխատանքների հետ, պայքարել աղանդների ու հերձվածների դեմ: Այստեղ պայքարի հիմնական սայրն ուղղվել է հակաքաղկեդոնական Հայոց եկեղեցու դեմ Վրաց ազգային մատենագրության բարձրարժեք հուշարձաններ (վարքեր, մեկնություններ, ներբողներ, շարականներ, պատմական և գեղարվեստական երկեր) ստեղծվելուց բացի մեծ վերելք է ապրել թարգմանական գործունեությունը:

Աղվանական գրի և գրականության մասին տեղեկությունները մեզ հասել են հայկական մի շարք աղբյուրների միջոցով: Կորյունի, Մովսես Խորենացու և Մովսես Կաղանկատվացու հաղորդմամբ՝ Ե դարում Մեսրոպ Մաշտոցը այբուբեն է ստեղծել աղվանների՝ զարգարների համար, և նրա օգնությամբ զարգարները թարգմանեցին Աստվածաշունչը և Ավետարանը:

Աղվանական գրի և գրականության մասին հստակ փաստագրական նյութեր պահպանվել են 506 թվականին Դվինի եկեղեցական ժողովի նյութերում: Է դարի

պատմիչ Մովսես Կաղանկատվացին իր աշխատությունում թվարկում է իր ժամանակի գիր, գրականություն ունեցող ժողովուրդներին, որոնց մեջ հիշատակում է նաև աղվաններին: Աղվանական գրի մասին խոսել է նաև Ը դարի պատմիչ Ղևոնդը: Վերջինս ևս թվարկում է այն լեզուները, որոնցով գրված են եղել չորս Ավետարանները և Ի դարում տեղում նա հիշատակում է աղվաններենը:

Այս գրով, սակայն, գրականություն չի պահպանվել և հայտնի է միայն այբուբենը:

Մատենագրական ժառանգության հիմնական գործիքները

Սկսած ԺԹ դարի 30-ական թվականներից՝ փորձեր են արվել հայտաբերել աղվանական գրականության փաստեր: Այդպիսի հաջող փորձերից մեկն իրականացվել է 1937 թվականի սեպտեմբերի 28-ին, երբ էջմիածնում հայտնաբերվեց ձեռագիր մատյան Իյա Աբուլաձեի կողմից: Այդ ձեռագիրն հայտնի էր Աբուլաձեից առաջ Մատյանն այժմ պահվում է Երևանի Մատենադարանում: Այն հայալեզու դասագիրք էր, որտեղ բացի հայկական, հունական, եբրայական, վրացական, արաբական այբուբեններից նշված էր նաև աղվանական այբուբենը: Իյա Աբուլաձեն, ապա Ա. Շանիձեն պնդում էին, որ հայտնաբերված այբուբենը իսկապես աղվանական այբուբեն է և նրանում արտացոլված հնչյունային համակարգը պետք է համապատասխանի ուղիական՝ դաղստանյան լեզվախմբի, լեզգիական ենթալեզվախմբի հնչյունային համակարգին:

Աղվանագիտության ոլորտում երկրորդ կարևոր հայտնագործությունը տեղի ունեցավ 1948-1952 թվականներին, երբ Ադրբեջանի և Ղաղստանի տարածքում հնագիտական պեղումների ժամանակ հայտնաբերվեցին գրություններ, որոնք այսօր պայմանականորեն համարվում են աղվանական: Այնուհետև 1975 թվականին Եգիպտոսում Սինայի՝ Սուրբ Եկատերինայի եկեղեցում բռնկված հրդեհից հետո իրականացվող վերանորոգման աշխատանքների ժամանակ հայտնաբերվեց կրկնագիր ձեռագրեր՝ գրված պերգամենտի վրա, որոնք աղվանական գրերի ուսումնասիրության հարցում կարևոր ձեռքբերում էին: Հայտնաբերված ձեռագրերի

հետազոտությամբ սկսեցին զբաղվել Վրաստանի գիտությունների ակադեմիայի ձեռագրերի ինստիտուտը: Ձեռագրի տեքստաբանական քննությունը կատարվել է գերմանացի հետազոտողների կողմից: Ուսումնասիրության արդյունքում պարզ դարձավ, որ կրկնագիր ձեռագրի երկրորդ շերտը բաղկացած է քառալեզու վեց տարբեր ձեռագրերից. հայտնաբերված գրերից մեկը ոչ հայերեն էր և ոչ էլ վրացերեն, չնայած որ որոշակի նմանություն ուներ հայերենին և վրացերենին: Արշավախմբի ղեկավար Ջազա Ալեքսիձեն, ուսումնասիրելով այս կրկնագիրը, հանգեց այն եզրակացության, որ իրենք գործ ունեն աղվանական գրի հետ: Ուսումնասիրելով կրկնագրերը և համեմատելով արդեն հայտնաբերված աղվանական գրերի նմուշները՝ Ջազա Ալեքսիձեն ենթադրեց, որ աղվանական հնչյունները թվով 52-ն են, որից 45-ը բաղաձայն հնչյուններ են, յոթը՝ ձայնավոր, և քանի որ կովկասյան աղվաններնը պատկանում է Հյուսիս կովկասյան լեզվաընտանիքի լեզգիական լեզվախմբին, ապա աղվանական լեզվի բառապաշարի մեկ երրորդը որոշակի զուգահեռներ պետք է ունենա ուղիներենի հետ: Հավանաբար, աղվաններնը պետության ծիսական և ադմինիստրատիվ լեզուն էր քրիստոնեական ժամանակաշրջանում (մոտավորապես 300-700-ական թվականներին): Ե դարից սկսած աղվանները ունեցել են հարուստ գրական համակարգ, զարգացած եկեղեցական գրականություն, պատմագրություն, պոեզիա և այլն:

Բյուզանդական կայսրությունում ստեղծվել է գրականության ու մշակույթի մի շերտ, որը հետագայում կոչվել է բյուզանդական մշակույթ: Բյուզանդիայի ու Հայաստանի մշտական հարաբերությունների ընթացքում հայ և բյուզանդական մշակույթները որոշակիորեն փոխազդել են:

Բյուզանդական գրականության լեզուն հունարենն է: IV–VII դարերում այն արտացոլել է քրիստոնեական մշակույթի ծագման ու զարգացման ընթացքը: Տիրապետողն արձակն էր, որի բովանդակությունը նոր կրոնի և կրոնական գործիչների փառաբանումն էր: Հեթանոսական մշակույթը յուրացնելուն նպաստել են Բարսեղ Կեսարացին (մեկնություններ), Գրիգոր Նյուսացին (փիլիսոփայական արձակ), Գրիգոր Նազիանզացին (էպիգրամներ, հոգևոր երգեր): Հովհան Ոսկեբերանը զարգացման գագաթնակետին է հասցրել ճարտասանական արձակը: Զ դարի պոեզիայի խոշորագույն ներկայացուցիչ Ռոմանոս Մելոդոսը հիմնադրել է պաշտամունքային պոեմը. գրել է շուրջ 1000 պոեմ (պահպանվել է 85-ը):

Թ-ԺԲ դարերի հեղինակների գործերում երևան են եկել արձակ և չափածո սիրավեպեր, կատարվել են թարգմանություններ: ԺԱ դարի վերջին հունարեն թարգմանվեցին «Քալիլա և Դիմնա», «Գիրք Սինդիբադի մասին» և այլ գործեր:

Աշխարհիկ բովանդակություն ունեին հայազգի Մարիամ Նորավկայի վարքերը: Սիմեոն Մետաֆրաստեսի ստվարածավալ «Վարք սրբոց»-ում տեղ է գտել նաև Գրիգոր Լուսավորչի վարքը: Բանաստեղծ Հովհաննես Կիրիոտն իր էպիգրամներում փառաբանել է Նիկեփորոս II Փոկաս և Հովհաննես I Չմշկիկ կայսրերի սխրանքները: XI դարում նշանավոր էր երգիծաբան Քրիստափոր Միտիլենացին:

XII դարի գրական գործերից հայտնի է հայազգի ռազմական գործիչ Կեկավմենոսի «Ստրատեգիկոնը» (օգտակար խորհուրդների ձեռնարկ), իսկ Թեոդորոս Պրոդրոմոսն առաջինն է ստեղծագործել սիրավեպի ժանրով («Ռոդանթե և Պիոկլեսո»)՝ օգտագործելով խոսակցական լեզուն:

Եզրակացություն

Սույն հետազոտությամբ հնարավորություն ունեցանք հետազոտելու քրիստոնյա Արևելքի մշակույթի և մատենագրական ժառանգության հիմնական կենտրոնները և գործիքները:

Յուրաքանչյուր ազգի լեզուն ու մատենագրությունը հարուստ է ինքնին: Տարբերվելով միմյանցից՝ նրանց մեջ նույնական է մի բան, բոլորն էլ իրենց զարգացման հիմքում դրել են քրիստոնեական մատենագրության գոհարը՝ Աստվածաշունչը: Քրիստոնյա երկրների գրականություններն ու մշակույթները տարբերվում են իրարից: Նրանցից ոչ բոլոր ժողովուրդներն են, որ ստեղծել են ազգային լեզվով մատենագրություն: Արևելքի քրիստոնյա ժողովուրդները քրիստոնյա են դարձել հունական ինչպես նաև ասորական կամ արամեական մշակույթի ճանապարհով:

Հայոց պատմության վաղ շրջանի բազմաթիվ անցքեր ու ավանդություններ արտացոլվել են ասորի մատենագիրների երկերում, որոնցից օգտվել են հայ մատենագիրները: Մեսրոպ Մաշտոցին, հայկական գրերը ստեղծելիս աջակցել են ասորի գիտնականները: Աստվածաշնչի հայերեն առաջին թարգմանությունները կատարվել են նաև ասորերենից: Ասորերեն են թարգմանվել հայ մատենագիրների երկերը:

Բյուզանդական կայսրությունում ստեղծվել է գրականության ու մշակույթի մի շերտ, որը հետագայում կոչվել է բյուզանդական մշակույթ: Բյուզանդիայի ու Հայաստանի մշտական հարաբերությունների ընթացքում հայ և բյուզանդական մշակույթները որոշակիորեն փոխազդել են:

Օգտագործված գրականություն

1. Քրիստոնյա Հայաստան հանրագիտարան, էջ 255-300.
2. Ազատ Բոգոյան, Մերձավոր Արևելքի Հայաստանը, էջ 448-467.
3. Ազատ Բոգոյան, Ս. գիրքը մայր աթոռ Ս.էջմիածնի հրատարակչական ծրագրերում, 219-231.
4. Հայաստանը և արևելաքրիստոնեական քաղաքակրթությունը, Երևան, 12-13 դեկտեմբեր, 2016թ.